Los Angeles Times

Արդեն ուժասպառ, հայերը մեղադրում են

Այս վերնագրի տակ «Լոս Անջելես Թայմս» թերթը իր մայիսի 19-ի համարում Ջոն-Թոր Ալբերգի գրչով մի ծավալուն թղթակցություն է գրել Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակի մասին:

Հաստատելով, որ հայերը մեղադրում են ավերիներին «1500 տարուց ի վեր հայերով բնակեցված շրջանների բնակչությանը դաժան միջոցներով բռնագաղթի ենթարկվելու հանցանքով», խոսում է Հադրութի շրջանից Գորիսի գյուղերը գաղթեցված 1500 հայերի մասին, վկայակոչելով Մոսկվայում հայկական ներկայացուցչության աշխատակից Միկիտ Ղապարյանին, որն ավելացրել է, թե ուրիշ 1200 հոգի, որոնց մեծ մասը կանայք, երեխաներ եւ ծերունիներ, բռնի կերպով տարվել են բացօթյա վայրեր, որտեղ կանանցից մեկը ծննդաբերել է:

Թղթակիցը ներկայացրել է նաեւ ավերի տեսակետները, որոնք հերքում են հայերի ամբաստանությունը ուժի գործածության կապակցությամբ, ավելացնելով, թե Շուշիի եւ Հադրութի շրջաններից հայկական 6 գյուղերի բնակիչներ իրենք են ցանկություն հայտնել Հայաստան տեղափոխվելու, մինչ մնացյալները, ըստ Ասիա-Իրադա գործակալության, պատրաստ են խաղաղորեն ապրելու այստեղ եւ բարիդրացիական հարաբերությունների մեջ լինելու ադրբեջանցիների հետ»:

Հոդվածագիրը, տեղեկացնելով Լեռնային Ղարաբաղից ընտրված պատգամավորների կողմից ՄԱԿ-ին եւ պրեզիդենտ Բուշին ուղղված օգնության դիմումի մասին, վկայակոչել է Կամո Ավանեսյանին, որ բացատրել է հայկական գյուղերը բռնագաղթեցնելու խորհրդային բանակ-ավերի օմոնականների ծանոթ սցենարի մասին, ավելացնելով, որ ձերբակալությունից վերծ մնացած կանանց տրվում են պատրաստի դիմումնագրեր՝ թե իրենք ցանկանում են կամովին լքել իրենց գյուղերը:

Թղթակիցը վկայակոչում է նաեւ Արցախից Լեւոն Մ. Շահնազարովին, որ իբր ասել է, թե վերջին իրադարձությունները խուճապ են առաջացրել մարդի հայ ազգաբնակչության մոտ եւ հայտարարել, թե «ոչ մի բռնագաղթ անհրաժեշտ չէ այս պահին, բավական է մարդկանց թողնել՝ եւ նրանք կգնան»...

Մյուս կողմից, ուսումնասիրելով Շահնազարովին, հոդվածագիրը պատմում է, որ Արեւշատ եւ Դոլանլար գյուղերից հայ բնակչությունը ավտոբուսներով տեղափոխվելով Լաչինի շրջան, ավերիները նրանց կենդանի մարմիններն օգտագործել են որպես «վահան» իբր Հայ գրոհայիններ հարձակումներից պաշտպանվելու համար:

Վերջում «Լոս Անջելես Թայմս»ի թղթակիցը վկայակոչել է այժմ Մ. Նահանգներում գտնվող պատգամավոր Պարույր Հայրիկյանին, որ հայտարարել է, թե վերջին իրադարձությունները «այլեւս ազգամիջյան կոնֆլիկտ չեն, այլ կոնֆլիկտ՝ ամբողջատիրության եւ ռամկավարության միջեւ, որտեղ էթնիկական զգացումները շահարկվում են ամբողջատիրության կողմից, եւ Մոսկվան Հայաստանի դեմ որպես զենք օգտագործում է Ադրբեջանին»: